Արձանագրություն N 4
ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Ք. Վանաձոր «05» օգոստոսի 2019թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Նախագահ՝

Մ. Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ

Ս. Մկրտչյան

Է. Բաղրամյան

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԲԱ գնահատող աշխատակազմ

Ա. Սաղաթելյան

Վ. Մխիթարյան

Քարտուղար՝ Տ. Հովհաննիսյան <<Առանց քվեարկության>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Օրակարգ

1. **Ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցների մասին**

1.1 ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքի երկրորդական փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն թվականի հուլսի 26-ի արձանագրությամբ որոշում էր կայացրել 3 աշխատանքային օր տրամադրել «Մասիս» ՍՊԸ-ին առկա անհամապատասխանությունները շտկելու և էլեկտրոնային փոստային տարբերակով շտկված որակավորման փաստաթղթերը ուղարկելու համար:

1.2 « Մասիս» ՍՊԸ-և սահմանված ժամկետներում ներկայացրել է շտկում:

1.3 «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում շտկումից հետո ևս առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշում և «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում:

- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում ներկայացված են տեխնիկական միջոցներ ընդհանուր բոլոր չափաբաժինների

համար, այնինչ պետք է ներկայացվեին յուրաքանչյուր չափաբաժնի մասով առանձին:

- «Մասիս» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրեր: Սակայն մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրերից որևէ մեկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ մասնակիցը ներկայացրել է պայմանագրեր, որոնք իրականացվել են քաղաքաշինության բնագավառի շինարարական լիցենզիայի շրջանակներում, այլ ոչ թե տրանսպորտային լիցենզիայի շրջանակներում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

<u>2. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.</u>

2.1 Մերժել «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համաձայն և <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 48-րդ կետի 2-րդ մասի:

2.2 «Մասիս» ՍՊԸ-ի տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ Ֆինանսների նախարարություն:

2.3 "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1 կետի համաձայն ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Մ. Մխիթարյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Ս. Մկրտչյան
	_____	Է. Բաղրամյան
	_____	Ա. Սաղաթելյան
	_____	Վ. Մխիթարյան
Գնումները համակարգող՝	_____	Տ. Հովհաննիսյան